ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԱՅՐԱՊԵՏՈՎԱ ՄԻԼԱ ԳՐԻԳՈՐԻԻ

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ»

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ԵՐԵՎԱՆ - 2026

МЕЖГОСУДАРСТВЕННАЯ ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ОГРАНИЗАЦИЯ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ
«РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ»

АЙРАПЕТОВА МИЛА ГРИГОРЬЕВНА

ПРИНЦИПЫ АДМИНИСТРИРОВАНИЯ И АДМИНИСТРАТИВНОГО ПРОИЗВОДСТВА И ИХ РОЛЬ В РЕАЛИЗАЦИИ ПРАВА НА НАДЛЕЖАЩЕЕ АДМИНИСТРИРОВАНИЕ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

ЕРЕВАН – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝ *իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ*
Հրայր Վարդանի Թովմասյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ *իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր* ***Լյուդմիլա Ասլանի Տխաբիսիմովա***
իրավաբանական գիտությունների թեկնածու
Զավեն Գագիկի Սմբատյան

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ՆԳՆ կրթահամալիր**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հուլիսի 2-ին՝ ժամը 15:00-ին, Ռուս-Հայկական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Ռուս-Հայկական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունիսի 1-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
իրավաբանական գիտությունների թեկնածու՝ **Ջ.Հ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Академии государственного управления РА

Научный руководитель: *доктор юридических наук, доцент* **Грайр Варданович Товмасян**

Официальные оппоненты: *доктор юридических наук, профессор* ***Людмила Аслановна Тхабисимова***
кандидат юридических наук,
Завен Гагикович Смбатян

Ведущая организация: **Образовательный комплекс МВД РА**

Защита состоится 2-ого июля 2026 года в 15:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. О. Эмина 123).
С диссертацией можно ознакомиться в научной библиотеке Государственного образовательного учреждения высшего профессионального образования «Российско-Армянского университета».
Автореферат разослан 1-ого июня 2026 года.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук **Дж.А. Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի հետազոտման արդիականությունը. Սույն աշխատության արդիականությունը պայմանավորված է վարչական իրավունքի զարգացման համատեքստում վարչարարության սկզբունքների նշանակությամբ և դրանց համակարգային փոխկապվածության գիտագործնական նշանակությամբ: Վարչարարությունը վարչական մարմինների հանրային-իշխանական գործունեության հիմնական դրսևորման ձևն է, իսկ վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները դրա իրականացման հիմքում ընկած ելակետային կանոններն են, որոնք հանդես են գալիս որպես վարչարարության իրավաչափության, նպատակահարմարության և արդյունավետության ապահովման հիմնական երաշխիքներ: Վարչարարության ողջ հայեցակարգի կառուցումը որպես կանոն թելադրված է իրավունքի այն սկզբունքների կյանքի կոչման հրամայականով, որոնք ապահովում են մասնավոր և հանրային շահերի հավասարակշռման իրականացումը:

Վարչարարությունը, միևնույն ժամանակ, կոչված է ապահովելու մարդու իրավունքների արդյունավետ իրականացումը և պարտականությունների պատշաճ կատարման ապահովումը: Վարչարարության՝ ընդհանրապես, և վարչական վարույթի՝ մասնավորապես, կանոններն ուղղված են այնպիսի համակարգի ստեղծմանը, որտեղ վարչական մարմինների հանրային-իշխանական գործունեության արդյունքում կապահովվեն մարդու այն իրավունքների արդյունավետ իրացումը և այն պարտականությունների անշեղորեն կատարումը, որոնց համար օրենքով սահմանված են վարչական լիազորությունների գործադրման պարտադիր պահանջներ: Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները հագեցնում են այս կանոնները իրավունքի համընդհանուր արժեքներով, ինչպիսիք են՝ արդարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը, մարդասիրությունը և այլն: Վարչարարական ընթացակարգերի և նման հիմնադրույթների միջև ներքին տրամաբանական ու գործառութային կապի խզումը կամ դրանց ոչ համարժեք ընկալումը հանգեցնում է վարչական մարմինների գործունեության արդյունավետության նվազման և բովանդակային անհամակարգվածության, իրավական պաշտպանության մեխանիզմների թուլացման: Այդ հանգամանքով է պայմանավորված

տվյալ թեմայի գիտական արդիականությունն ու հետազոտման անհրաժեշտությունը՝ նպատակ ունենալով բացահայտել, թե ինչպես են վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները ուղղակիորեն կամ անուղղակի ազդում ինչպես վարչարարական ընթացակարգերի սահմանման, այնպես էլ դրանց գործնական կիրառման վրա, ըստ այդմ՝ ինչ դեր ունի դրանց փոխհարաբերությունը իրավաչափ, նպատակահարմար և արդյունավետ վարչարարության ապահովման գործում:

Թեև վարչարարության և վարչական վարույթի սկզբունքներին այս կամ այլ կերպ անդրադարձել են տարբեր իրավաբան գիտնականներ իրենց աշխատություններում, սակայն առանձին սկզբունքների ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը որոշակի վարչարարական ընթացակարգերի վրա դեռևս ամբողջությամբ համակարգված չէ:

Հատուկ ուշադրության է արժանի իրավակիրառ գործընթացում իրավունքի սկզբունքների կիրառման խնդիրը: Դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարանները իրենց որոշումներում առավել հաճախ են վկայակոչում վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները՝ չունենալով որևէ ուղեցույց սկզբունքների գործարկման առնչությամբ: Իրավունքի սկզբունքները կիրառվում են տարբեր համատեքստերում՝ փաստարկի ուժեղացման համար, իրավական մեկնաբանության գործընթացում, իրավունքի անալոգիան օգտագործելիս, ինչպես նաև որպես անմիջական գործող նորմեր: Սակայն իրավակիրառ պրակտիկայի հիմքում դրված չէ վարչական իրավունքի բնագավառում կուտակված տեսական գիտելիքը: Այդ գիտելիքի որոշակի համակարգումը և վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների իրավակիրառելիության գիտական իմաստավորումը կարող է այդ սկզբունքների քաոտիկ վկայակոչումներից դեպի նպատակային գործարկմանն անցում կատարելու խթան դառնալ:

Բացի վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների ընդհանուր տեսաիրավական հիմքերը քննարկելու անհրաժեշտությունից, արդիական է նաև առանձին սկզբունքների իմաստավորումն ու արժևորումը: Մարդու պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի իրացման գործուն երաշխիք է վստահության պաշտպանության սկզբունքի ապահովումը, որը, լինելով վարչաիրավական ներկայիս համակարգի արդիական խնդիրներից, բավարար ուսումնասիրության արդյունքում կօժանդակի վարչարարության

կատարելագործմանը: Մասնավորապես՝ խնդրահարույց է վարչական մարմինների վերադաս վարչական մարմնի (պաշտոնատար անձի) կողմից վերահսկողության կարգով սեփական նախաձեռնությամբ վարչական ակտի վերանայման հետ կապված հիմնախնդիրը՝ հենց վստահության պաշտպանության սկզբունքի ապահովման համատեքստում, քանզի մի կողմից վարչական իրավունքում վերադաս վարչական մարմնին (պաշտոնատար անձին) լիազորություն է վերապահվում սեփական նախաձեռնությամբ վերահսկողության կարգով վերանայել ստորադաս վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտը, մյուս կողմից՝ այդպիսի լիազորության գործադրումը կարող է բախվել ակտի հասցեատիրոջ՝ վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունքին, հետևաբար, այդպիսի լիազորության գործադրումը պետք է բխի վարչարարության օրինականության և համաչափության սկզբունքներից և չխաթարի վստահության պաշտպանության սկզբունքի էությունը:

Վարչական մարմիններն ու պաշտոնատար անձինք վարչարարություն իրականացնելիս պետք է իրենց գործողություններում հետևեն իրավունքի միատեսակ կիրառմանը, որը վարչարարության կարևորագույն խնդիրներից է: Իրավունքի միատեսակ կիրառման բացակայությունը իրավակիրառ պրակտիկան դարձնում է անկանխատեսելի, որը առաջացնում է վարչական մարմնի և պաշտոնատար անձի, ինչպես նաև վարչական դատարանների գործողությունների հանդեպ հասարակության վստահության կորստին, բարդացնում է վարչարարություն իրականացնող սուբյեկտների գործունեությունը: Իրավունքի միատեսակ կիրառման վրա ազդող գործոնների դասակարգումն ու սահմանումը վարչաիրավական գործունեությունում կարևոր նախադրյալներ կստեղծեն պատշաճ վարչարարության իրականացման հարցում: Ըստ այդմ՝ որոշակի հրատապություն է ձեռք բերում նաև իրավունքի միատեսակ կիրառման որպես սկզբունքի պահպանման կամ խախտման նախադրյալներն ուսումնասիրելու անհրաժեշտությունը:

Իրավական որոշակիության սկզբունքի ապահովմանն ուղղված անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության և վարչական մարմինների կամայականության սահմանափակման կարևոր երաշխիք է վարչական լռության ինստիտուտը: Ներկայում, երբ առաջնային նշանակություն է տրվում ինչպես ոչ իրավաչափ վարչական լռության հետևանքների իրավական կարգավորմանը, այնպես էլ պոզիտիվ և նեգատիվ ֆիկցիաների կիրառմանը, այդ

ինստիտուտի գործնական ազդեցությունը օրենսդրական դինամիկայի և դատական պրակտիկայի վրա զգալիորեն մեծացել է: Ատենախոսությունում ներկայացված վերլուծությունը հնարավորություն է տալիս ոչ միայն պատկերացնել ներկայիս իրավակարգավորումների արդյունավետությունը, այլև մատնանշել այն խնդիրները և դրա լուծման ուղիները, որոնք անհրաժեշտ են վարչարարության պատշաճ իրականացման համար:

Հետազոտության նպատակը. Հետազոտության նպատակն է հիմնավորել վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների տեղը և նշանակությունը պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացման հարցում, բացահայտել դրանք ապահովող մեխանիզմներն ու գործոնները, ուսումնասիրել այդ սկզբունքների իրականացման ընթացակարգային և նյութաիրավական առանձնահատկությունները, ինչպես նաև մշակել հիմնավոր տեսական և կիրառական առաջարկություններ՝ վարչաիրավական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման համար:

Հետազոտության խնդիրներն են. Նպատակին հասնելու համար «Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները և դրանց դերը պատշաճ վարչարարության իրավունքի իրացման հարցում» թեմայով ատենախոսությունում անհրաժեշտ է լուծել հետևյալ գիտական խնդիրները՝

- պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի տեսական և իրավական հիմքերի ուսումնասիրություն (վերլուծել պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքը և դրա կառուցակարգային կապը արդյունավետ պաշտպանվելու միջոցների իրավունքի հետ),
- հիմնավորել վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների իրավական բնույթը, համակարգը և առանձնահատկությունները,
- վերլուծել, թե ինչպես են սահմանադրական սկզբունքները ձևավորում վարչարարության և վարչական վարույթի ոլորտի սկզբունքները,
- հստակեցնել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով չամրագրված, սակայն վարչարարության համար պարտադիր սկզբունքների անհրաժեշտությունը և կիրառելիության սահմանները,
- բացահայտել վարչարարության սկզբունքների անմիջական կիրառման հիմնախնդիրները,

- համապարփակ ուսումնասիրել վարչարարության առանձին սկզբունքները՝ որպես պատշաճ վարչարարության երաշխիք,
- մշակել վարչական մարմնի լռության ընդհանուր բնութագիրը,
- ուսումնասիրել վարչական վարույթում վարչական մարմնի լռելու իրավական հետևանքները,
- մշակել իրավակիրառ գործունեության բարելավմանն ուղղված առաջարկությունները,
- վերհանել իրավական դատական և վարչական պրակտիկայում հանդիպող հիմնախնդիրները և դրանց ազդեցությունը պատշաճ վարչարարության իրացման հարցում,
- հիմնավորել օրենսդրական բացերի, հակասությունների, անորոշությունների հաղթահարման անհրաժեշտությունը՝ որպես պատշաճ վարչարարության կարևոր նախապայման,
- մշակել օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների համալիր առաջարկություններ՝ ուղղված վարչարարության սկզբունքների արդյունավետ ապահովման և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքի լիարժեք իրացմանը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը, տեսական և նորմատիվ հիմքերը. Հեղինակը դիմել է գիտական աշխատանքների լայն շրջանակի: Ուսումնասիրության տեսական հիմքը կազմում են հայ և օտարերկրացի հեղինակ իրավագետների աշխատությունները՝ Հ. Թովմասյան, Ա. Ղամբարյան, Գ. Դանիելյան, Կ. Զարիկյան, Ռ. Խանդանյան, Թ. Շաքարյան, Մ. Մուրադյան, Կ. Հակոբյան, Օ. Լուխթերհանդթ, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմերս, Ռ. Ռուբել, Ք. Ալեքսանյան, Ս. Ալեքսեև, Վ. Բաբաևա, Ա. Բարանով, Վ. Բիբլիո, Ա. Վասիլևա, Ա. Վորոնովա, Գերխարտ Կրեֆտ, Ս. Գրաչևա, Մ. Գուրվիչ, Կ. Դավիդով, Գ. Կելզեն, Օ. Դժուխա, Յ. Իվանովա, Տ. Ռադչենկո, Ն. Էրիաշվիլի, Կարլ-Պետեր Զոմմերմանն, Դ. Կերիմով, Վ. Կոժեվնիկով, Պ. Կուռինդին, Վ. Լեբեդև, Մ. Մարչենկո, Ն. Մատուզով, Ա. Մալկո, Կ. Մելնիկ, Ի. Միննիկես, Ս. Միխալևա, Ա. Միխայլով, Մոնտեսքյո, Ցիցերոն, Մ. Նգալամուլումե, Վ. Ներսեսյանց, Օ. Պանասյուկ, Պաուլ Տիդեմանն, Ա. Ռազգիլդեև, Ռենե Դավիդ, Ռ. Սարպեկով, Ն. Սիդորենկո, Վ. Սուսլով, Ե. Ֆռոլովա, Բ. Լեսիվ, Լ. Խարիտոնով, Ռ. Յագուդին, Պրեդրագ Դմիտրիևիչ, Մ. Գրուվս, Գ. Վիկս, Վերա Պարիսիո, Երալդա Կանի և այլն:

Սույն ատենախոսության նորմատիվային հիմք են հանդիսացել ինչպես ներպետական, այնպես էլ մի շարք օտարերկրյա օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

Թեմայի գիտական հետազոտման աստիճանը. Ատենախոսության մեջ քննարկվում են այնպիսի հարցեր, որոնք այս կամ այն չափով արտացոլվում են տարբեր հեղինակների աշխատություններում, սակայն թեմայի բովանդակությունը կազմող ինստիտուտների շուրջ ծառացող հիմնախնդիրների վերաբերյալ առանձին համալիր գիտական քննարկման ու իրավական վերլուծության առարկա չեն եղել, ինչը փորձ է արվել կատարել սույն աշխատությունում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը. Հետազոտության մեթոդական հիմքը եղել է ընդհանուր գիտական և մասնավոր իրավունքի մեթոդները՝ իրավահամեմատական մեթոդ, վիճակագրական մեթոդ, ընդհանրացման մեթոդ, վերլուծություն, սինթեզ և այլն: Հետազոտության մեթոդաբանությունը համապատասխանում է իր օբյեկտին և նպաստում է նշված թեմայի բացահայտմանը:

Հետազոտության գիտական նորույթը. Հետազոտության գիտական նորույթը արտացոլվում է վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների բազմակողմանի և համալիր վերլուծության համատեքստում դրանց նշանակությանը, կենսագործման հիմնախնդիրներին, ինչպես նաև վարչարարության նոր սկզբունքների վերհանմանն ուղղված գաղափարներում ու առաջարկություններում: Ատենախոսության գիտական նորույթն արտացոլվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում, ատենախոսության եզրակացությունում կատարված տեսական եզրահանգումներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Ատենախոսությամբ հիմնավորվել է վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների իրավակիրառելիության գիտական իմաստավորման անհրաժեշտությունը, քանզի դրանց անմիջական գործածության, կիրառման վերաբերյալ ոչ՛ տեսահիրավական, ոչ՛ էլ վարչական իրավունքի դոկտրինը դեռևս հստակ և համընդհանուր կանոններ չի ձևավորել, իսկ նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նույնիսկ տեսական հիմքի բացակայության պայմաններում դրանք արդեն իսկ գործնականում կիրառվում են:

Ատենախոսության մեջ հեղինակը հիմնավորել է նաև, որ վարչական իրավունքի սկզբունքների անմիջական կիրառումը ընդգծում է դրանց դերը որպես հիմնարար իրավական ուղենիշներ, որոնք ապահովում են ոչ միայն անձանց իրավունքների պաշտպանությունը, այլև վարչական գործընթացի կայունությունը: Հետևապես, դրանք չեն կարող անտեսվել կամ ընտրողաբար օգտագործվել, քանզի դրանց կիրառումը իրավունքի գերակայության և արդարության պահպանման անհրաժեշտ պայման է, իսկ անտեսումը՝ վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու հիմք: Ավելին՝ սկզբունքների անմիջական կիրառումը թույլ է տալիս հաղթահարել նորմատիվ անորոշությունը և ապահովել վարչահիրավական հարաբերությունների մասնակիցների շահերի հավասարակշռությունը:

Ուստի, ատենախոսության մեջ ընդգծվել է վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների անմիջական կիրառման օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը:

2. Ատենախոսությամբ հիմնավորվել է, որ ներկայումս վարչական մարմնի սեփական նախաձեռնությամբ վերադասության կարգով բարենպաստ իրավաչափ վարչական ակտերի վերանայման օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորման կիրառման արդյունքում խախտվում է մարդու պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի իրացման գործուն երաշխիք՝ վստահության պաշտպանության իրավունքը՝ վարչական ակտի գոյության մասով: Հետևապես, անհրաժեշտ է ամրագրել վստահության պաշտպանության իրավունքը որպես սկզբունք և դրա ապահովման գործուն գործիքակազմը օրենսդրական մակարդակում՝ հստակ իրավակարգավորման ենթարկելով բարենպաստ իրավաչափ վարչական ակտերի սեփական նախաձեռնությամբ վերահսկողության կարգով վերադաս վարչական մարմնի կողմից վերանայման դեպքերը և կարգը՝ դրանով իսկ ապահովելով բարենպաստ իրավաչափ վարչական ակտերի «պաշտպանությունը» և դրանց նկատմամբ վարչական վարույթի բարեխիղճ մասնակցի վստահությունը՝ սահմանելով, որ այդ վարչական ակտերի բեկանումը հնարավոր է միայն վարչական կամ դատական կարգով բողոքարկման դեպքում, այլ ոչ թե սահմանված իրավակարգավորումների դեպքում՝ բողոքի բացակայության դեպքում վարչական մարմնի հայեցողությամբ:

3. Իրավունքի միատեսակ մեկնաբանումն ու կիրառումը պետք է կազմի վարչական մարմինների գործունեության անքակտելի հիմքը: Թեև կամայականության արգելքի սկզբունքը պարտադրում

է վարչական մարմիններին միատեսակ իրավիճակներում իրականացնել միատեսակ վարչարարություն, այնուամենայնիվ, օրենսդրական կարգավորումներից և ձևավորված իրավակիրառ պրակտիկայից բխում է, որ այն վերաբերում է միայն վարչական մարմինների հայեցողական լիազորությունների իրականացմանը: Արդյունքում, վարչական մարմիններն իրենց լիազորություններն իրականացնելիս միևնույն իրավական նորմերը մեկնաբանում են տարբեր եղանակներով, ինչը ձևավորվում է վարչարարության ոչ միատեսակ իրավակիրառ պրակտիկա: Հետևապես, անհրաժեշտ է իրավունքի միատեսակ մեկնաբանումն ու կիրառումն օրենսդրական մակարդակում ամրագրել որպես սկզբունք, իսկ դրա խախտումը՝ որպես վարչական ակտի բեկանման կամ փոփոխման համար հիմք: Ատենախոսությամբ հիմնավորվել է, որ նշվածն անուղղակիորեն ազդեցություն կունենա իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության կանխատեսելիության և կայունության վրա:

4. Վարչարարության սկզբունքների խախտումներն ինքնին կարող են հանգեցնել անձի համար նաև բարենպաստ հետևանքների: Մասնավորապես, վարչական պոզիտիվ ֆիկցիայի դեպքում՝ վարչական մարմնի լռությունը հավասարեցվում է հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունմանը: Թեև այս ինստիտուտը կոչված է երաշխավորելու օրինականության և ի պաշտոնե քննության սկզբունքների պատշաճ իրականացումը, այն չի կարող վերածվել հանրային շահերի կամ այլ անձանց հիմնարար իրավունքների խախտման գործիքի: Ուստի, պոզիտիվ ֆիկցիային զուգահեռ ատենախոսությամբ հիմնավորվել է, որ օրենսդրորեն անհրաժեշտ է որոշ դեպքերի համար ամրագրել նաև նեգատիվ ֆիկցիան, որը կերաշխավորի պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի իրացումը՝ բացառելով այլոց իրավունքների և օրինական շահերի, ինչպես նաև հանրային շահերի խախտումը:

5. Ատենախոսությամբ հիմնավորվել է, որ բողոքարկման վարույթում պոզիտիվ ֆիկցիայի կիրառումը ուղղված է վարչական կարգով բողոքարկման ինստիտուտի արդյունավետության բարձրացմանը և բողոքների քննության գործընթացի էական բարելավմանը, արդյունքում նաև՝ դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանը, հընթացս հիմնավորվել է նաև դրա կիրառման սահմանափակումների և առանձնահատկությունների իրավակարգավորումների սահմանման անհրաժեշտությունը:

Հետազոտության արդյունքների տեսական նշանակությունը. Աշխատության ուսումնասիրությամբ համակարգված վերաիմաստավորվել և խորացվել են պատշաճ վարչարարության իրավունքի, վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների տեսական դրույթները, ամրապնդվել է դրանց դոկտրինալ-իրավական բովանդակությունը և բացահայտվել է սկզբունքների փոխկապակցվածության ազդեցությունը սահմանադրական իրավունքների արդյունավետ իրացման վրա: Ուսումնասիրությունը նոր տեսական հենք է ձևավորում պետական իշխանության և մասնավոր անձանց փոխհարաբերություններում գործող հիմնարար սկզբունքների կիրառելիության, դերի և սահմանների վերաբերյալ՝ նպաստելով վարչական իրավունքի ընդհանուր տեսության զարգացմանը, սկզբունքների իրավաբանական բնույթի հստակեցմանը և դրանց ինտեգրմանը պատշաճ վարչարարության իրավունքի համակարգում:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը. Աշխատանքի ընթացքում ներկայացված վերլուծությունները, սկզբունքների կիրառման մեխանիզմների բացահայտված խնդիրները և առաջարկվող գործնական լուծումները կարող են ուղղակիորեն կիրառվել վարչական մարմինների գործունեության կատարելագործման, վարչարարության ընթացակարգերի բարելավման և իրավակիրառ պրակտիկայի միատեսակեցման նպատակով: Աշխատանքի եզրահանգումները կարող են ծառայել նաև վարչական արդարադատություն իրականացնող մարմինների համար՝ վարչական լռության, վստահության պաշտպանության, լսված լինելու իրավունքի և այլ հիմնարար սկզբունքների ճիշտ և համաչափ կիրառման ապահովման ուղղությամբ: Բացի այդ, ստացված արդյունքները կարող են օգտագործվել վարչական վարույթի վերաբերյալ մեթոդական ձեռնարկների, ուսումնական ծրագրերի, վերապատրաստման դասընթացների մշակման մեջ՝ նպաստելով պատշաճ վարչարարության մշակույթի բարձրացմանը և պետական մարմինների գործունեության արդյունավետության աճին: Ուսումնասիրվել են կոնկրետ դատական գործեր, որոնք ցույց են տալիս սկզբունքների գործնական կիրառման ձևերը, այդ թվում՝ օրենսդրական բացերի լրացման և իրավունքի մեկնաբանման տեսանկյունից:

Ուսումնասիրության արդյունքների փորձարկումը. Ատենախոսությունը պատրաստվել է Հայ-ռուսական համալսարանում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի վեց հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք միավորում են 9 պարագրաֆներ, եզրակացությունից և գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 139 էջ է:

Ներածությունում հիմնավորված է թեմայի հետազոտման արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, մեթոդաբանական հիմքերը և արդյունքների տեսագործնական նշանակությունը, թեմայի մշակվածության աստիճանը, տեսական և նորմատիվ հիմքերը, թեմայի գիտական հետազոտման աստիճանը:

Գլուխ առաջին. «Պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի զարգացման պատմական նախադրյալները»: Այն բաղկացած է երկու պարագրաֆից:

1.1. պարագրաֆում, որը կրում է **«Հանրային իշխանության դեմ արդյունավետ պաշտպանվելու միջոցների իրավունքը որպես պատշաճ վարչարարության իրավունքի նախադրյալ»** վերնագիրը՝ համառոտ անդրադարձ է կատարվում հանրային իշխանությունից պաշտպանվելու իրավունքի հայեցակարգային հիմքերին, հիմնական տարրերին և աղբյուրներին, ինչպես նաև ընդգծվում դրա կարևորությունը իրավունքի գերակայության և ժողովրդավարության սկզբունքների ամրապնդման գործում:

1.2. պարագրաֆում, որը կրում է **«Հանրային իշխանության դեմ արդյունավետ պաշտպանության իրավունքի զարգացումը»** վերնագիրը՝ ներկայացվել է հանրային իշխանությունից պաշտպանվելու արդյունավետ միջոցների իրավունքի առաջացման և զարգացման ընդարձակ պատմական ակնարկ:

Գլուխ երկրորդ. «Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները որպես պատշաճ վարչարարության իրավունքի իրացման երաշխիքներ»: Այն բաղկացած է 4 պարագրաֆից:

2.1. պարագրաֆում, որը կրում է **«Սկզբունքները՝ որպես վարչարարության և վարչական վարույթի իրավական նախադրյալներ»** վերնագիրը՝ ներկայացված է իրավունքի սկզբունքների ընդհանուր բնութագիրը, վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների առանձնահատկությունները, պատշաճ վարչարարության իրավունքի ապահովմանն ուղղված առանձին սկզբունքները:

2.2. պարագրաֆում, որը կրում է **«Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները սահմանադրական կարգավորումների համատեքստում»** վերնագիրը՝ ներկայացվել է

սահմանադրական նորմերից վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների բխեցման առանցքային դերակատարությունը վարչական գործունեության իրավական հիմքի ձևավորման գործում, հանդիսանալով որպես վարչական համակարգի բարոյական կողմնացույց:

2.3. պարագրաֆում, որը կրում է **«Իրավունքի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքը վարչական վարույթում»** վերնագիրը՝ հիմնավորվել է իրավունքի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքի ամրագրման անհրաժեշտությունը:

2.4. պարագրաֆում, որը կրում է **«Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների անմիջական կիրառման որոշ հիմնախնդիրները»** վերնագիրը, ներկայացվել են՝ վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների անմիջական կիրառման ասպեկտները, պայմանները, գործնական օրինակներ: Հատուկ ուշադրության է արժանացել իրավակիրառ գործընթացում իրավունքի սկզբունքների օգտագործման խնդիրը:

Երրորդ գլուխ. «Վարչարարության և վարչական վարույթի առանձին սկզբունքների հատուկ նշանակությունը պատշաճ վարչարարության ապահովման համատեքստում»: Այն բաղկացած է երեք պարագրաֆներից:

3.1. պարագրաֆում, որը կրում է **«Ի պաշտոնե (Ex officio) քննության սկզբունքի և լսված լինելու իրավունքի հարաբերակցությունը»** վերնագիրը՝ այս երկու սկզբունքները ներկայացվել են վարչական իրավունքում որպես միմյանց փոխլրացնող ինստիտուտներ:

3.2. պարագրաֆում, որը կրում է **«Վստահության պաշտպանության սկզբունքի ապահովման հիմնախնդիրը վերադասության կարգով վերանայման վարույթում»** վերնագիրը՝ ուսումնասիրվել է վարչական մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ վերահսկողության կարգով վարչական ակտի վերանայման վարույթում անձի վստահության պաշտպանության իրավունքի ապահովման խնդիրը:

3.3. պարագրաֆում, որը կրում է **«Օրինականության և ի պաշտոնե քննության սկզբունքի խախտման իրավական հետևանքները (ոչ իրավաչափ վարչական լռություն)»** վերնագիրը՝ ներկայացվել է վարչական մարմնի լռության ընդհանուր բնութագիրը, ներպետական օրենսդրության զարգացման դինամիկան, անդրադարձ կատարվել նաև բողոքարկման վարույթում վարչական մարմնի լռությանը:

Եզրակացությունում ի մի են բերվել հետազոտության հիմնական արդյունքները:

Ատենախոսության եզրակացությունում արված եզրահանգումները հետևյալն են.

1. Պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքն ընդգրկում է մեխանիզմների լայն շրջանակ, որոնք ուղղված են նախ և առաջ վարչարարական՝ պետության հետ հարաբերություններում ցանկացած պաշտպանության, ինչպես նաև արդարադատության մատչելիության, գործերի քննության անաչառության և դատական ակտերի կատարման ապահովմանը:

Արդյունավետ պաշտպանության միջոցները հանդիսանում են մեխանիզմ, որի միջոցով իրականացվում է հանրային իշխանության կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների վերականգնում, որը ստեղծում է կամայականություններին խոչընդոտող զսպումների և հակակշիռների համակարգ:

Պատշաճ վարչարարության իրավունքի էությունը կայանում է՝ վարչական մարմինների գործողություններից (ապօրինի կամ ոչ պատշաճ) կամ անգործությունից անձանց իրական և արդյունավետ պաշտպանության երաշխավորված միջոցներ ունենալու հնարավորության մեջ, որը, մի կողմից, ապահովում է մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների լիարժեք իրացումը, մյուս կողմից՝ նպաստում և ծառայում է հանրային իշխանության վերահսկելիությանը, սահմանափակմանը և իրավունքի գերակայության սկզբունքի կենսագործմանը:

2. Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները հասարակության և պետության քաղաքական և սոցիալ-տնտեսական հիմնաքարերով պայմանավորված հիմնական, ղեկավարող-կարգավորող սկզբնաղբյուրներն են (իրավական գաղափարներ), որոնք անմիջականորեն ամրագրված են վարչաիրավական նորմերում կամ բխում են դրա բովանդակությունից և արտացոլում են դրա բնորոշիչ հատկություններն ու էությունը:

Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները ազդում են մարդկանց գաղափարների և պատկերացումների վրա, որոնք արտահայտում են իրենց սուբյեկտիվ վերաբերմունքը ցանկալի և գործող իրավունքի նկատմամբ՝ մեծ դեր են խաղում մասնագիտական և զանգվածային իրավագիտակցության ձևավորման հարցում:

Ընդ որում, վարչական մարմինների կողմից վարչական գործերի քննմանն ու լուծմանն ուղղված գործունեության միջոցների,

խնդիրների, մեթոդների և նպատակների վերաբերյալ պետության և ժամանակակից հասարակության իրավական հայացքները արտահայտում են վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները:

Հետևաբար, օրենքներում և այլ նորմատիվ-իրավական ակտերում սահմանված հիմնարար գաղափարները պաշտոնատար իրավասու անձանց և պետական իշխանության վարչական գործունեության գործադիր մարմինների հանրային ծառայության մատուցման և պետական գործառույթների իրականացման, վարչական հարկադրանքի կիրառման, հանրային կառավարման իրավասության իրացման բովանդակության, էության, նպատակի և կարգի իրականացման մասին՝ համարվում են վարչական գործընթացի սկզբունքներ:

Վարչական գործընթացի սկզբունքները՝ դրանց հռչակմամբ, տեսական ամրագրմամբ ու իրավակիրառ գործունեությունում օգտագործմամբ, ապահովում են վարչարարության և վարչական վարույթի ամբողջ իրավական ընթացքը: Հենց սկզբունքներն են երաշխավորում վարչական իրավադրույթներում՝ մարդու սահմանադրական իրավունքներից բխեցվող կարգավորումների արտացոլումը: Անհրաժեշտ է ընդգծել, որ ոլորտը իրավական կարգավորման ենթարկած վարչական օրենսդրական բոլոր իրավադրույթները հենց սկզբունքներից բխող իրավակարգավորման արդյունք են: Վերջինիս ամրագրմամբ է ապահովվում գործնականում սկզբունքների կիրառելիությունն ու դրանով երաշխավորվում վարչական գործընթացի իրավական լինելը:

3. Վարչարարությունն ու վարչական վարույթը առանցքային դեր են խաղում օրենքների կատարման, հանրային ծառայությունների տրամադրման և վեճերի լուծման հարցում: Սույն գործընթացների հուսալիությունն ու արդյունավետությունը ապահովելու համար անհրաժեշտ է պահպանել այն սկզբունքները, որոնք ծառայում են որպես նախադրյալներ: Այդ սկզբունքները ոչ միայն սահմանում են վարչական մարմինների վարքագիծը, այլ նաև ապահովում քաղաքացիներին՝ արդար վերաբերմունքի և ընթացակարգային ազնվության երաշխիքներ: Սույն ուսումնասիրության շրջանակներում, հեղինակն իրականացրել է առանձնացված սկզբունքների, այն է՝ օրինականության, պատշաճության, թափանցիկության, անաչառության և հաշվետվողականության սկզբունքների բովանդակության բացահայտում և դրանց ապահովման հարցում առկա հիմնախնդիրների ու դրանց

պատճառների վերհանում, և նշել, որ դիտարկվող սկզբունքների նշանակության վերհանումն իրականացվել է դրանց վերաբերյալ համապատասխան տեսական մոտեցումների ուսումնասիրման լույսի ներքո:

Օրինականության, պատշաճ վարչարարության, թափանցիկության, անաչառության և հաշվետվողականության սկզբունքները վարչարարության և վարչական վարույթի պարտադիր նախադրյալներն են: Այս սկզբունքներին հետևելով վարչական մարմինները ապահովում են վարչական գործընթացի արդարությունն ու արդյունավետությունը, դրանով իսկ նպաստում հանրային վստահության ու պետաիշխանական մարմինների նկատմամբ վստահությանը: Այս սկզբունքներին հետևելով՝ վարչական մարմինները կարող են ներկայացնել իրենց նվիրվածությունը օրենքի գերակայությանը և վարչական գործընթացի սկզբունքներին, որը վերջնարդյունքում կբարձրացնի վարչարարության ու վարչական վարույթի արդյունավետությունն ու որակը:

4. Սահմանադրական նորմերից վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների բխեցումը առանցքային դեր է խաղում վարչական գործունեության իրավական հիմքի ձևավորման գործում: Այս սկզբունքները հավասարակշռություն են ապահովում պետական կառավարման արդյունավետության և քաղաքացիների իրավունքների պահպանման միջև, ծառայում են որպես ուղեցույց օրենսդրության և պրակտիկայի զարգացման համար: Այսպիսով, սահմանադրական սկզբունքները ոչ միայն իրավական հիմք են, այլև վարչական համակարգի համար բարոյական կողմնացույց:

5. Վարչարարության սկզբունքներն ունեն ոչ միայն տեսական, այլ նաև գործնական նշանակություն: Սկզբունքների նշանակությունը՝

1) ձևավորում է վարչարարության որակական առանձնահատկությունները,

2) պայմանավորում ամբողջ վարչարարության բովանդակությունը,

3)օժանդակում է վարչարարության բոլոր նորմերի ճիշտ մեկնաբանմանը,

4)օժանդակում է վարչական իրավունքի բացերի հաղթահարմանը, օրենքի կամ իրավունքի անալոգիայի կիրառումը,

6. Իրավունքի նորմի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքը, որպես պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի իրացման երաշխիք՝ ներպետական վարչական իրավունքում՝ կարող է ապահովվել օրենսդրական

կարգավորումների համատեքստում՝ իրավական կարգավորումների արդիականության, օրենսդրական բացերի և իրավական հակասությունների բացակայության, գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների և դրանք կարգավորող իրավադրույթների համապատասխանության, օրենսդրական տեխնոլոգիաների որակի ապահովման պարագայում: Հետևաբար, վարչաիրավական օրենսդրությունում իրավունքի արդիական նորմերի բացակայության կամ գործող նորմերի՝ ներկայիս հանրային իրավահարաբերությունների ստանդարտներին չհամադրվելու արդյունքում՝ գործնականում ստեղծվում է մի իրավիճակ, երբ վարչական մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից իրավունքի նորմի տարաբնույթ կիրառման կամ մեկնաբանման հետևանքով կարող են խախտվել անձի, հանրության ու պետության օրինական շահերը:

Վարչաիրավական համակարգում իրավունքի միատեսակ կիրառման ու մեկնաբանման սկզբունքը փոխկապակցված լինելով հօգուտ ոչ իշխանական շահագրգիռ կողմի մեկնաբանման սկզբունքի հետ՝ ուղղված է երաշխավորելու հանրության և պետության օրինական շահերի միջև հավասարակշռության ապահովման գործուն մեխանիզմների իրավական որոշակիության և իրավաստեղծ և իրավակիրառ գործունեությունում միատեսակ մոտեցման ձևավորմանը, իրավական մշակույթի և հանրության իրավագիտակցության մակարդակով պայմանավորված՝ վարչարարության սուբյեկտների բարեխղճության, նրանց ձգտումների՝ գործի օրինական, արդյունավետ և կառուցողական լուծմանը:

7. Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների անմիջական կիրառման իրավական բնույթը, ընդգծելով դրանց կարևորությունը՝ որպես իրավունքի ինքնուրույն աղբյուր, կարող է լրացնել նորմատիվ կարգավորման թերությունները: Նրանք հանդես են գալիս որպես համընդհանուր գործիք՝ վարչական գործընթացներում նորմատիվ որոշակիության և արդարության միջև հավասարակշռություն ապահովելու համար:

Սկզբունքների անմիջական կիրառումը ոչ միայն նպաստում է իրավունքի բացերի և կոլիզիաների հաղթահարմանը, այլև ամրապնդում է վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ: Երկարաժամկետ հեռանկարում այն նպաստում է վարչական իրավունքի զարգացմանը, կառավարման ավելի արդար և արդյունավետ համակարգի ձևավորմանը, որտեղ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները գտնվում են

իրավակիրառ գործունեության կենտրոնում: Սա վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները դարձնում է իրավունքի գերակայության ապահովման և սահմանադրական արժեքների իրացման մեխանիզմի անբաժանելի մաս:

Դատական որոշումներում իրավունքի սկզբունքների կիրառումը արտացոլում է դրանց գործառույթների բազմակողմանիությունը: Նախ, դրանք ուժեղացնում են պատճառաբանվածությունը, ինչը թույլ է տալիս դատարաններին հիմնավորել իրենց որոշումները՝ դուրս գալով օրենքի ֆորմալ տեքստի սահմաններից: Երկրորդ, սկզբունքներն օգտագործվում են իրավական նորմերի մեկնաբանման գործընթացում, որտեղ դրանք ծառայում են որպես գործիք օրենքի իրական իմաստը բացահայտելու և իրավական անորոշությունները վերացնելու համար: Երրորդ, դրանք առանցքային դեր են խաղում օրենսդրության բացերը հայտնաբերելու գործում՝ հիմք հանդիսանալով իրավունքի կամ օրենքի անալոգիայի կիրառման համար: Վերջապես, նորմ-սկզբունքների անմիջական կիրառումը ցույց է տալիս դատական պրակտիկայում դրանց ինքնուրույն նշանակությունը, ինչը պահանջում է դրանց բնույթի և գործողության մեխանիզմների խորը իմաստավորում:

Հեղինակն առանձնացրել է սկզբունքների անմիջական կիրառման տեսական և գործնական հիմքերը, ներկայացրել դրանց առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ փոխլրացնող բնույթը, բարձրագույն նորմատիվ կարգավիճակը, կիրառման պարտադիր լինելը, ճկունությունը և հարմարվողականությունը, sui generis նորմեր հանդիսանալը; մատնանշել՝ վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների անմիջական կիրառման պայմանները, ներկայացրել գործնական օրինակներ:

8. Վստահության պաշտպանության սկզբունքի որոշ տարրեր թեև ամրագրված են օրենքում, գործնականում այն լիարժեք չի ընկալվում և կիրառվում: Օրենսդրական կարգավորումները և իրավակիրառ պրակտիկան այնպես է զարգացել, որ օրենքի խախտմամբ ընդունված վարչական ակտը (ոչ իրավաչափ բարենպաստ վարչական ակտ) շահագրգիռ երրորդ անձի հայցի հիման վրա բոլոր դեպքերում ճանաչվում է անվավեր՝ անկախ դրա նկատմամբ այլ անձանց վստահության իրավունքը հաշվի առնելու: Մինչդեռ, վարչական ակտի հասցեատերը հիմքեր ունի՝ ենթադրելու, որ տվյալ ակտն իր առնչությամբ պատշաճ կերպով է կայացվել և իրավունք ունի ոչ միայն հիմնվել դրա վրա, այլ սկսել

իրականացնել այն և հուսալ, որ այն չի փոխվի (բացառությամբ, եթե նա պարտավոր էր իմանալ ակտի ոչ իրավաչափ լինելու մասին):

Հեղինակն անդրադառնալով վստահության պաշտպանության մասով առկա կարգավորմանը՝ բարենպաստ իրավաչափ վարչական ակտերի նկատմամբ վստահության առնչությամբ, նշել է, որ այն բավարար չէ վստահության պաշտպանության իրավունքի սկզբունքի էության ամբողջական արտացոլման համար, սկզբունքն օրենքում, որպես վարչարարության և վարչական վարույթի հիմնարար սկզբունք, ամրագրված չէ, այլ նորմերում ամբողջությամբ բացահայտված չէ, պատկերացումները մի քիչ վերացական են և ոչ կոնկրետ:

Վստահության պաշտպանության սկզբունքը, որպես մարդու պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի իրացման յուրօրինակ երաշխիք, պետք է որպես վարչարարության և վարչական վարույթի հիմնարար սկզբունք՝ իր ամրագրումը ստանա վարչական օրենսդրությունում:

9. Անդրադառնալով ֆիկցիայի օրենսդրական կարգավորումներին, հեղինակի կողմից, փորձ է արվել առաջարկել ֆիկցիայի այնպիսի օրենսդրական կարգավորում, որով ապահովելով պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի իրացումը՝ կարելի է օրենսդրական կարգավորումներով փորձել երաշխավորել օրինականության և ի պաշտոնե քննության սկզբունքների պատշաճ իրականացումը՝ պահպանելով հավասարակշռություն, որով չի խախտվի հասարակության և պետության շահը, չեն վտանգվի այլոց իրավունքներն ու օրինական շահերը, քանզի ներկայիս գործող իրավադրույթի համաձայն կիրառվում է միմիայն պոզիտիվ ֆիկցիան՝ սահմանելով բացառություն միայն այն դեպքում, երբ հայցվում է առ ոչինչ վարչական ակտ:

Հետևապես, հեղինակն ընդգծել, որ՝

- ոչ բոլոր դեպքերում վարչական լռությունը պետք է ենթադրի վարչական ակտի ընդունում, պոզիտիվ ֆիկցիան չպետք է վերաբերվի բոլոր դեպքերին
- հստակ պետք է լինեն մատնանշված այն դեպքերը, երբ հայցվող վարչական լռությամբ վարչական ակտը չի կարող համարվել ընդունված:

Օրենքի 48-րդ հոդվածում բացի առ ոչինչ վարչական ակտ հայցելիս ֆիկտիվ ակտ չընդունելու դեպքից, անհրաժեշտ է ներառել նաև հետևյալ դեպքերը, երբ ֆիկտիվ ակտը չի կարող համարվել ընդունված՝

- հայցվող վարչական ակտը շոշափում է երրորդ անձանց շահերը, և դրանք գերակշռում են դիմումատուի շահերի նկատմամբ
- հայցվող բարենպաստ վարչական ակտը շոշափում է հանրային շահը, և այն գերակշռում է դիմումատուի շահերի նկատմամբ:

10. Անդրադառնալով բողոքարկման վարույթում պոզիտիվ ֆիկցիայի կիրառելիության խնդրին, հեղինակն ընդգծել է, որ առաջացել է բողոքներ քննող գործուն մարմիններ ստեղծելու անհրաժեշտություն, որոնք, մի կողմից, կիրականացնեն անձանց իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն գործի քննության ավելի կարճ ժամանակահատվածում՝ նվազագույն միջոցների կիրառմամբ, մյուս կողմից, կբեռնաթափեն դատարանները նմանատիպ գործերից, որոնք կարող էին լուծում ստանալ բողոքարկման միջոցով: Բողոքարկման գործուն մեխանիզմի ներդրումն առավելապես բխում է և պետության, և անձի շահերից, սակայն միայն այն դեպքում, եթե առկա են բողոքարկման քննության գործուն որոշակի մեխանիզմներ:

11. Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել վարչարարության սկզբունքների կիրառման մեխանիզմները, ուշադրություն դարձնելով վարչաօրենսդրական կարգավորումներում ժամանակին լրացումների կատարմանը՝ առավել մանրակրկիտ և հստակեցված վարչաիրավական համակարգ ունենալու համար, այն է՝ սույն ատենախոսության շրջանակներում ուսումնասիրության առարկա դարձած չամրագրված սկզբունքներին՝ իրավունքի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքին, անմիջական կիրառման սկզբունքին, վստահության պաշտպանության սկզբունքին, պատշաճ կարևորություն ցուցաբերելով, որոնք ուղղված են վարչական օրենսդրության կատարելագործմանը: Ըստ այդմ՝ առաջարկվում է նշված սկզբունքների ամրագրումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ Գլխում՝ նպաստելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի իրացմանը:

Ատենախոսության արդյունքները կարող են ծառայել ինչպես վարչական օրենսդրության հետագա զարգացումների, այնպես էլ վարչարարական պրակտիկայի կատարելագործման համար՝ նպաստելով իրավական պետության գաղափարի իրականացմանն ու խթանելով պատշաճ վարչարարության մշակույթի ձևավորումը Հայաստանում Հանրապետությունում:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են Հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Մ.Գ. Հայրապետովա. Значение принципов администрирования. Принципы, незакрепленные Законодательством РА. «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, հուլիս-օգոստոս, 2021, Երևան, 7-8 (265-266), էջեր 43-51:
2. Մ.Գ. Հայրապետովա. Воздействие административного молчания на конституционное право человека на надлежащее администрирование. «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, հոկտեմբեր-սեպտեմբեր, 2023, Երևան, 10-12 (292-294), էջեր 15-25:
3. Մ.Գ. Հայրապետովա. Վերահսկողության կարգով սեփական նախաձեռնությամբ վերադաս վարչական մարմնի կողմից վարչական ակտի վերանայման հիմնախնդիրները՝ վստահության պաշտպանության սկզբունքի համատեքստում. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան. Տեղեկագիր» պարբերական, Երևան, 1 (113)2024, էջեր 122-135:
4. Մ.Գ. Հայրապետովա. Իրավունքի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքի օժանդակ ազդեցությունը պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի իրացման հարցում. «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, ապրիլ-հունիս, 2024, Երևան, 4-6 (298-300), էջեր 3-9:
5. Մ.Գ. Հայրապետովա. Սկզբունքները՝ որպես վարչարարության և վարչական վարույթի իրավական նախադրյալներ. «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդես, № 2 (12), 2024 էջեր 33-41:
6. Մ.Գ. Հայրապետովա. Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների անմիջական կիրառման որոշ հիմնախնդիրներ. ««Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան. Տեղեկագիր» պարբերական, Երևան, 1 (118)2025, էջեր 157-177:

АЙРАПЕТОВА МИЛА ГРИГОРЬЕВНА

ПРИНЦИПЫ АДМИНИСТРИРОВАНИЯ И АДМИНИСТРАТИВНОГО ПРОИЗВОДСТВА И ИХ РОЛЬ В РЕАЛИЗАЦИ НАДЛЕЖАЩЕГО АДМИНИСТРИРОВАНИЯ

Право на надлежащее администрирования является одной из основополагающих конституционных ценностей современного правового государства, обеспечение которой зависит не только от правильной формулировки правовых норм, но и от эффективного применения принципов деятельности административных органов. Проведенное исследование позволило всесторонне проанализировать исторические, теоретические и нормативные основы формирования этого права, а также оценить роль принципов администрирования и административного производства в процессе его эффективного обеспечения.

В данной исследовательской работе было выявлено, что право личности на эффективные средства защиты от государственной власти является одним из предпосылок права на надлежащее администрирование. Это право имеет исторически сложившуюся богатую основу, начиная от античной и средневековой правовой мысли и заканчивая принципами, закрепленными в современном международном и конституционном праве. Изучение его элементов, источников и гарантий показало, что право на эффективную защиту обеспечивает важный механизм контроля над государственной властью, который, в свою очередь, является неотъемлемой частью правового государства и верховенства права.

В рамках проведенной работы была изучена правовая природа, особенности и специфика внутреннего регулирования принципов администрирования и административного производства. Также был проанализирован вопрос непосредственного применения принципов как с теоретической, так и с практической точки зрения. Было отмечено, что для административных органов непосредственное применение принципов часто требует не только юридических знаний, но и высокого уровня административной культуры. В тоже время, подчеркнуто, что конституционные принципы играют важную роль в выявлении и применении принципов, не закрепленных административным законодательством, обеспечивая полное и непрерывное развитие и

эффективное осуществление содержания права на надлежащее администрирование.

В ходе исследования осуществлен углубленный анализ отдельных принципов как основных гарантий качества администрирования и защиты конституционных прав личности. Принцип ex officio, право быть выслушанным, принцип защиты доверия, требования единообразного применения и толкования права, а также институт молчания административного органа показали, что каждый из вышеперечисленных принципов имеет уникальное значение в обеспечении справедливости, предсказуемости и правовой определенности администрирования. Исследование также выявило ряд проблем, связанных с нарушениями принципа защиты доверия со стороны административных органов, нечеткими и непропорциональными механизмами применения административного молчания, а также неравномерной практикой толкования и применения права.

В целом, проведенный в рамках диссертации исследование показало, что принципы администрирования и административного производства являются не только структурными компонентами административного права, но и прямыми гарантиями реализации конституционных прав личности. Они обеспечивают прозрачность, подотчетность, предсказуемость и справедливость деятельности административных органов, создавая тем самым реальную и эффективную основу для осуществления надлежащего администрирования.

MILA GRIGORI HAYRAPETOVA

PRINCIPLES OF ADMINISTRATION AND ADMINISTRATIVE PROCEEDINGS AND THEIR ROLE IN THE REALIZATION OF THE RIGHT TO GOOD ADMINISTRATION

The right to good administration is one of the fundamental constitutional values of a modern rule-of-law state. Ensuring this right depends not only on the proper formulation of legal norms but also on the effective application of the principles governing the activities of administrative authorities. The present study provides a comprehensive analysis of the historical, theoretical, and normative foundations of the formation of this right and assesses the role of the principles of administration and administrative proceedings in ensuring its effective realization.

The research demonstrates that an individual's right to effective remedies against public authorities constitutes one of the prerequisites for the right to good administration. This right has a rich historical foundation, originating in ancient and medieval legal thought and evolving through principles enshrined in contemporary international and constitutional law. The analysis of its elements, sources and guarantees shows that the right to effective protection serves as an essential mechanism for controlling public power, which in turn represents an integral component of the rule of law and constitutional governance.

The study also examines the legal nature, characteristics, and specific features of the domestic regulation of the principles of administration and administrative proceedings. Particular attention is paid to the issue of the direct application of these principles from both theoretical and practical perspectives. It is noted that for administrative authorities the direct application of principles often requires not only legal knowledge but also a high level of administrative culture. At the same time, it is emphasized that constitutional principles play a crucial role in identifying and applying principles that are not explicitly codified in administrative legislation, thereby ensuring the comprehensive and continuous development and effective implementation of the right to good administration.

Furthermore, the research provides an in-depth analysis of specific principles as key guarantees of the quality of administration and the protection of constitutional rights. The ex officio principle, the right to

be heard, the principle of the protection of legitimate expectations, the requirement of the uniform application and interpretation of the law and the institution of administrative silence demonstrate that each of these principles plays a unique role in ensuring fairness, predictability and legal certainty in administration. The study also identifies several issues, including violations of the principle of the protection of legitimate expectations by administrative authorities, unclear and disproportionate mechanisms governing administrative silence, and inconsistent practices in the interpretation and application of the law.

Overall, the research conducted within the framework of this dissertation shows that the principles of administration and administrative proceedings are not merely structural components of administrative law but also direct guarantees of the realization of constitutional rights. They ensure transparency, accountability, predictability and fairness in the activities of administrative authorities, thereby establishing a genuine and effective foundation for the realization of good administration.